ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

«ԱՍՏՎԱԾ, ՔՈ ՇՆՈՐՀՈՎ ՓՈԽԱԿԵՐՊԻՐ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՊՈՐՏՈ ԱԼԵԳՐԵ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԵՀԽ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

2006 թ. փետրվարի 14-23-ը Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) 9-րդ համագումարը, որին մասնակցում էին ավելի քան 700 պատգամավորներ ԵՀԽ անդամ Եկեղեցիներից, ինչպես նաև այլ մասնակիցներ: Համագումարում ընդհանուր մասնակիցների թիվը հասնում էր 3000-ի:

Համագումարը ԵՀԽ գերագույն օրենսդիր մարմինն է, որը գումարվում է յուրաքանչյուր յոթ տարին մեկ անգամ, և որի նպատակն է վերանայել ԵՀԽ ծրագրերը և սահմանել ընթացիկ քաղաքականությունը, ինչպես նաև ընտրել նախագահներ և նշանակել Կենտրոնական Կոմիտեի անդամներ, որոնք հանդիսանում են ԵՀԽ գլխավոր ղեկավար մարմինը մինչ հաջորդ համագումար:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Հայ Առաքելական Եկեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, համագումարին մասնակցեց 14 անձերից բաղկացած պատվիրակությամբ: Հայ Եկեղեցու պատվիրակության կազմում էին.

Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը

ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու՝ Գերաշնորհ Տ. Վիգեն եպս. Այքազյանը

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը

Կանադայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը

Սևանի Վազգենյան Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Մկրտիչ աբդ. Պռոշյանը

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբդ. Մանուկյանը

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Արժանապատիվ Տ. Վահրամ քհն. Մելիքյանը

ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղան բարեգործական հիմնադրամի տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը

Գերմանիայի հայոց թեմից պրոֆ. Խաչիկ Ղազարյանը

Եգիպտոսի հայոց թեմից՝ պր. Ռոբերտ Թաշչյանը,

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ինտերնետային գրասենյակի տնօրեն երեցկին Փոլա Դևեջյանը

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի թարգմանչուհի օր. Գայանե Ալեքսանյանը

Վեհարանի աշխատակցուհի օր. Լիլիթ Անտոնյանը

Բրազիլիայի հայոց թեմից՝ օր. Իզաբել Գենջյանը

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատվիրակության ղեկավարն էր Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը: Որպես երիտասարդ սպասավոր մասնակցում էր նաև Վեհափառ Հայրապետի գավազանակիր Հոգեշնորհ Տ. Շահե աբեղա Անանյանը:

Բրազիլիա մեկնելուց առաջ պատվիրակության անդամները հանդիպեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ստանալով Վեհափառ Հոր Հայրապետական օրհնություններն ու քաջալերանքները:

ԵՀԽ 340 անդամ Եկեղեցիների ավելի քան 700 ներկայացուցիչները և նրանց խորհրդականներն իրենց աշխատանքներն իրականացնում էին մի ծրագրով, որը բաղկացած էր աղոթքներից, Աստվածաշնչյան սերտողություններից, թեմատիկ քննարկումներից, լսումներից և հանձնախմբերի աշխատանքներից: Համագումարի սկզբում մի շարք հանձնախմբեր նշանակվեցին, որոնք պատասխանատու էին համագումարի ընթացիկ հիմնական աշխատանքների համար: Այդ հանձնախմբերում իրենց մասնակցությունը բերեցին նաև Հայ Եկեղեցու ներկայացուցիչները: Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանն ընդգրկված էր ԵՀԽ 9-րդ համագումարի գործադիր հանձնախմբում, որը համագումարը վերահսկող և աշխատանքներին հետևող գերագույն մարմինն էր: Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը ընդգրկված էր համագումարի կոմյունիկեն պատրաստող հանձնախմբում, իսկ դոկ. Կարեն Նազարյանը՝ համագումարում թեկնածուներ առաջադրող հանձնախմբում:

Հանձնախմբերը վերանայեցին նախորդ համագումարից մինչ օրս կատարված աշխատանքները, առաջարկեցին ապագայի ծրագրերի հետ կապված առաջնային խնդիրներ և ստորագրեցին փաստաթղթեր հասարակական հարցերի վերաբերյալ: Համագումարի ընթացքում լսվեցին զեկույցներ ԵՀԽ-ի գործունեության մասին և մշակվեցին առաջիկա գործունեության ծրագրերը: Ընդունվեց համագումարի պատգամն՝ ուղղված Եկեղեցիներին, ինչպես նաև եկեղեցաբանական հայտարարություն և զեկույց՝ հասարակական խնդիրների վերաբերյալ:

Համագումարը բաղկացած էր ոչ միայն ծրագրով նախատեսված միջոցառումներից, այլ նաև այն հանդիպման վայր էր բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչների համար՝ հնարավորություն ընձեռելով միմյանց ավելի մոտից ծանոթանալու, իրենց խնդիրները միմյանց հետ կիսելու ու համատեղ մարտահրավերներին ծանոթանալու համար: Այս նպատակով հատ-

կապես կարևոր էր «մուտիրան» ծրագիրը, որին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մասնակցում էր Հոգեշնորհ Տ. Մկրտիչ աբեղա Պռոշյանը՝ Կանաչ ասպվածաբանության ծրագրով:

Փետրվարի 17-ին համաժողովին ներկա գտնվեց և ելույթ ունեցավ Բրազիլիայի Դաշնային Հանրապետության նախագահ Լուիս Ինասիո Լուլա դա Սիլվան:

Նախագահն անդրադարձավ Բրազիլիայի զարգացման, աղքատության հաղթահարման գործում Եկեղեցիների ունեցած կարևոր դերակատարությանը, կրոնների ու քրիստոնեական տարբեր հարանվանությունների խաղաղ համակեցությանը և շնորհակալություն հայտնեց ԵՀԽ-ի պաշտոնեությանը՝ Բրազիլիան՝ Պորտո Ալեգրեն իբրև համաժողովի վայր ընտրելու համար:

Համագումարին հրավիրված էր նաև Քենթրբերիի Արքեպիսկոպոսը, ով հանդես եկավ բանախոսությամբ և հղեց իր ուղերձը: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Անգլիկան Արքեպիսկոպոս Դեսմոնդ Տուտուն: Լսվեց նաև Հռոմի Պապի ուղերձը:

Համագումարի ընթացքում կազմվել էին էկումենիկ երկխոսությունների 22 խմբեր, որոնցից յուրաքանչյուրը քննության առավ քրիստոնեական Եկեղեցիների առջև ծառացած մարտահրավերները: Խմբերի քննարկումների արդյունքները տեղ գտան համաժողովի ընդհանուր ուղերձում:

Էկումենիկ երկխոսության խմբի եռօրյա նիստերը, որ կրում էին «Էկումենիզմի նոր կերպերը» խորագիրը, նախագահեց Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

Առաջիկա յոթ տարիների համար ընտրվեց ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեն՝ բաղկացած 150 անդամներից, որտեղ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունն ունեցավ երկու ներկայացուցիչ՝ ի դեմս Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանի և երեցկին Փոլա Դևեջյանի:

Փետրվարի 23-ին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի իններորդ համագումարն ավարտեց իր աշխատանքները:

Համագումարի մասնակիցները ընդունեցին առաջիկա յոթ տարիների ԵՀԽ գործունեության ռազմավարությունը և ծրագիրը, հանդես եկան ընդհանուր ուղերձով: Համաժողովում ընդունվեցին վեց հայտարարություններ՝ որոնք վերաբերվում էին Լատինական Ամերիկային, պաշտպանության պատասխանատվությանը, ՄԱԿ-ի վերափոխմանը, ջրային պաշարների խնդիրներին, ահաբեկչությանը, մարդու իրավունքներին ու ահաբեկչության դեմ պայքարին, ինչպես նաև միջուկային սպառազինությունների սահմանափակմանը:

Նույն օրը գումարվեց նորընտիր Կենտրոնական Կոմիտեի անդրանիկ նիստը, որի ընթացքում ընտրվեցին ԵՀԽ-ի նախագահությունը և գործադիր վարչությունը: Նախ ընտրվեցին ԵՀԽ ութ նախագահողները, որոնք ներկայացնում են քրիստոնեական Եկեղեցիների բոլոր ընտանիքները: Որպես ԵՀԽ-ի ատենապետ ընտրվեց Բրազիլիայի Լյութերական Եկեղեցու նախագահ դոկտ. Վալտեր Ալթման եպիսկոպոսը, փոխատենապետեր՝ Սասիմայի միտրոպոլիտ Գենադիոսը (Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքություն) և տիկ. Մարգարիտ Հանդրիկ-Ռայրիմասեն (Ինդոնեզիայի Մոլուկկասի Բողոքական Եկեղեցի):

20 հոգուց կազմված գործադիր վարչության մեջ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց ընտրվեց Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ